

Լոյս երգերով կը ժպտի
Ցերեկներուն հոծ ժղխոր:

Մայթին վրայ մօտաւոր
Քայլերը միշտ կը շտապեն.
Արձագանգ մը հեռաւոր
Թողլով իրենց ըշտապեն.

Կապուած անոնց շշուկին
Կու լայ սիրտս սըգաւոր,
Խուլ թափի մը մէջ ուժգին:
Պատուհանէն հեռաւոր,

Երգեհոնի ձայնը մը ցունց
Կը հանէ սիրտըս տխուր.
Իր շէշտերուն թափն ու ցունց
Կը խըռովեն գիս անլուր:

III

Անշարժ կեցած մեկուսի
Կը հեծեծեմ սգաւոր.
“Վայելքն ինձմէ կը խուսի,
Կը հատնի կեանքն օրէ օր:

Պիտի ըլլա՞յ օր մ'արդեօք,
Որ դառնամ հին օրերուս.
Պիտի շնչե՞մ լիաթոք
Չըւարթութիւնն անոնց կոյս...”:

Բայց բնութեան հըրճուանքէն
Յոյս ու ժպիտ կը քաղեմ.
Լոյսեր յանկարծ կը ճեղքեն
Ստածումներս դժխեմ:

Եւ անուրջներ ոսկեզօծ՝
Լուռ՝ մտքիս մէջ կը պարեն,
Դուրս վանելով անոր հոծ
Թուխալը լոյսի փապարէն: